

17.10.2017թ.

ք.Եղեգնաձոր

«ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ԶՈՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամները, համայնքապետեր:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

- 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայող Գուրգեն Լորիսի Սահակյանի բնակարանային գործի ուսումնասիրություն:
- Արսեն Սերյոժայի Մարտիրոսյանի /Արտաբույն/ բնակարանային գործի ուսումնասիրություն;
- «Վայոց ձորի մարզի 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի համապատասխանեցումը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց

- 1.Գուրգեն Լորիսի Սահակյանի բնակարանային գործը ի լրումն «Վայոց ձորի մարզպետի 2017-06-16 թիվ 01/07.3/4308-17 գրության՝ ներկայացնել «ՊՆ»:
- 2.Արսեն Սերյոժայի Մարտիրոսյանի բնակարանային գործում առկա չէ ՋՄՊՎ տեղեկանքը, նա հանդիսանում է ԱԱԾ 2-րդ խմբի հաշմանդամ՝ նրա գործը հանել բնակարանի կարիքավորների ցուցակից: Հանձնաժողովի որոշման վերաբերյալ գրությունը ուղարկել քաղաքացուն և Եղեգնիսի համայնքապետարան:
3. Համայնքների «Հոհված կամ հաշմանդամ դարձած զին. ծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովների օգնությամբ 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերում առկա թերությունները վերացնել և նախապատրաստել ցուցակները «ՊՆ ներկայացնելու համար :

Հանձնաժողովի նախագահ
Քարտուղար

Մ.Հարությունյան
Յ.Բաբայան

17.10.2017թ.